

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 2012 թ-ի համայնքի ղեկավարի տարեկան

Համայնքի համայնքային բյուջեի եկամուտների և ծախսերի կատարողական՝ 2012թվականի
կարեկան կտրվածքով. առ. 01.01.2012-01.01.2013թ.

Եկամուտների տեսակը

Հողի հարկ	8306,4	100,1%
Գույքահարկ	2881,2	100,2%
Վարձակալական վ/վ	2055,1	100%
Դոտացիա	39035,5	100%
Տեղական տուրքեր	350,8	100,7%
Սուբվենց	2649,6	100%
Ընդամենը վարչական բյուջե	55278,6	101%

Ծախսեր.

Արմավիրի գյուղապետարանը 2012 թվականի տարեկան կտրվածքով կատարել է հետևյալ
ծախսերը:

- 1.Վճարվել է ընթացիկ աշխատավարձ 17886,8 հազ.դրամ
 - 2.փոխանցվել է սոց.վճար 3440,1 հազ.դրամ
 - 3.անապահով ընտանիքների օգնության գումար է վճարվել 4760,0 հազ.դրամ
 - 4.Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում 16032,1 հազ.դրամ
- Ֆոնդային բյուջեի ծախսերը 2724,5 հազ.դրամ

1. Գործավարություն.

2012թ. տարվա ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 350 գրավոր և բանավոր
դիմումներ և առաջարկություններ,որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները:
Համայնքի բնակիչներին տրամադրվել են 430 տեղեկանքներ,բնութագրեր:Հղվել են
95 պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների
ղեկավարներին:Համայնքի ղեկավարի կողմից արձակվել է 14 կարգադրություններ և
ընդունվել է 144 որոշումներ:

2. Ավագանու գործունեություն.

2012 թ-ի տարվա ընթացքում համայնքի ավագանին գումարել է 8 հերթական և 3 արտահերթ նիստեր: Ավագանու քննարկմանն են ներկայացվել 10 դիմումներ և ստացել իրենց համապատասխան լուծումները:

3. Գյուղատնտեսության ոլորտ.

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են.

բնակավայրային նշանակության հողեր – 242,9 հա

գյուղ. նշանակության հողատարածք – 417,11 հա, որից

խաղողի այգի – 52,66 հա

պտղատու այգի – 60,75 հա:

Անասնազլխաքանակ.

2012 թվականի նոյեմբեր ամսին համայնքում համատարած կատարվել է «սիբիրախտի» պատվաստում:

Առ 01.01.2013 թվականի դրությամբ համայնքում առկա են խոշոր եղջերավոր անասուններ 543 գլուխ, որից կովեր՝ 162

մանր եղջերավոր անասուններ 1268 գլուխ ոչխար, որից մայրեր՝ 1000, շիշակներ՝ 268

խոզեր՝ 128 գլուխ, որից մայրեր՝ 94

մեղվաընտանիք – 194

թռչուններ – 2112

Ազգաբնակչություն.

ա/ համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 3560 մարդ

2012 թ-ի ընթացքում Արմավիր համայնքում ծնվել է 42 երեխա, գրանցվել է 25 մահ:

Համայնքում կան 30 նպաստ ստացող ընտանիքներ և 400 թոշակառուներ:

5. Կրթություն և գիտություն.

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որտեղ հաճախում են 345 աշակերտ և աշխատում են 46 աշխատող: Մեկ մանկապարտեզ՝ 2խմբով, որտեղ հաճախում են 50 երեխա և աշխատում 11 աշխատող, մանկապարտեզը գործում է վեց ամսյա ժամկետով: Գործում է նաև Արվեստի դպրոց, 14 աշխատողներով որտեղ հաճախում են 58 երեխա, դպրոցը գործում է ամբողջ տարվա կտրվածքով:

6. Մշակույթ.

Համայնքը ունի մեկ մշակույթի տուն՝ 5 աշխատող, գործող գրադարան՝ 1 աշխատող, և գործում է ազգագրական պարերի խումբ 25 երեխաներով.

7. Առողջապահություն.

Համայնքում գործում է բժշկական ամբուլատորիա 11 աշխատակցով.

8. Զինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործունե աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է 2012 թ-ի գարնանային և աշնանային զինակոչը և կատարվել է պլան - առաջադրանքը:

9. Միջոցառումներ և սոցիալական ոլորտ.

Պատշաճ կերպով նշվում են Հայաստանի Հանրապետության պետական տոները և հիշատակի օրերը: Ըստ հարկի նշվում և կազմակերպվում են ,Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի տարելիցը, մարտի 8-ի տոները, կազմակերպվում է այցելություններ զոհված

ազատամարտիկների շիրիմներին.

Պարբերաբար իրականացվում է գյուղի փողոցների աղբահանությունը: Անխափան իրականացվում է խմելու ջրի մատակարարումը: 2012թ. սեպտեմբեր ամսին համայնքի կենտրոնում կառուցվել է զրուցարան-խաղասրահ:

10.ա/Համայնքի հիմնախնդիրներից առաջնային է համարվում մանկապարտեզի շենքի հիմնանորոգումը, որը դեռևս իրականացված չէ:

բ/խմելու ջրի խողովակների հիմնովին վերանորոգումը:

գ/եկեղեցու շինարարությունը:

Արմավիր համայնքի
ղեկավար՝



Ռ.Ֆ.Մարգարյան